ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

14 ՀՈՒԼԻՍԻ 2020 թ.
№ 8 (1058)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 55-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԴԻՄՈՐԴ-2020

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԸՆՏՐԱՆՔԻ ԱՌԱՋ

Մեր ազգային խառնվածքի մեջ կրթությունն առանձնահատուկ տեղ ունի, և, թերևս, դա է պատճառը, որ յուրաքանչյուր հայ մարդ ձգտում է իր երեխաների համար լավագույն կրթություն ապահովել՝ շեշտը դնելով հիմնականում բարձրագույն կրթության վրա:

Տարիներ առաջ դիմորդն ընտրում էր իր երազանքի մասնագիտությունը, նախապես ընտրում իր սիրելի ոլորտը, որին հետագայում պիտի նվիրվեր: Ընտրությունը հիմնականում պայմանավորված էր մայրաքաղաքում, մարզերում ու շրջաններում տնտեսական տարբեր ճյուղերի զարգացվածությամբ: Օրինակ, վանաձորցիներն ընտրում էին քիմիա մասնագիտության ֆակուլտետները, որովհետև այնտեղ քիմիական արտադրություն կար, ալավերդցիներն ընտրում էին մետալուրգիական մասնագիտություններ ունեցող բուհերը, որովհետև քաղաքի լեռնամետալուրգիական գործարանն անընդհատ նոր, երիտասարդ կադրերի կարիք ուներ… Այսպես ձևավորվում էին նաև ընտանեկան մասնագիտական ավանդույթներ՝ մետալուրգների ու քիմիագործների սերունդներ. որդիները փոխարինում էին հայրերին՝ փոխանցելով իրենց մասնագիտական հմտություններն ու տարիների փորձառությունը: Աշխատանքային ոլորտները ևս շահում էին, որովհետև համալրվում էին ոչ թե պարտադրված, այլև իրենց մասնագիտությունը սիրող կադրերով:

Ինչ է փոխվել այսօր… Այսօր դպրոցի շրջանավարտը շրջանցում է այդ ավանդույթները, անտեսելով իր հնարավորություններն ու նախասիրությունները, ձգտում է տեղ գրավել այնպիսի բուհերում ու ֆակուլտետներում, որոնց մատուցած մասնագիտություններով կարող է ավարտելուց հետո աշխատանքի տեղավորվել: Իսկ այսօր աշխատանքային շուկայի պահանջարկը հիմնականում SS ոլորտի մասնագետներն են: Իսկ ի՞նչ անի շրջանավարտը, ուրիշ ի՞նչ ընտրի, երբ տնտեսությունն ավերված է և տարիներով չի վերականգնվում: Եվ, ուրեմն, դժվար է մեղադրել դպրոցի շրջանավարտին…երբ շուկայում պահանջված չէ իր սիրելի ու նախընտրելի մասնագիտությունը…

Մինչդեռ երկրին պետք է համամասնական զարգացում՝ բոլոր ոլորտների ուղղությամբ, և շատ կարևոր է, որ դպրոցի յուրաքանչյուր շրջանավարտ ընտրի իր սիրելի, այլ ոչ թե պարտադրված և պահանջարկ ունեցող մանագիտությունը, որտեղ ինքը կարող է ոչ պիտանի լինել… Եվ արդյունքում ստացվում է, որ ապագա քիմիագործն ու մետալուրգն ընտրում են ծրագրավորողի մասնագիտությունը…

21-րդ դարը տեխնոլոգիական զարգացումների դար է, այսօր արդեն առանց համակարգչի ու համացանցի հնարավոր չէ պատկերացնել մեր կյանքը, բայց դա չի նշանակում, որ ապագայի բոլոր մասնագետները պետք է ընտրեն ծրագրավորողի ու նրան հարակից մասնագիտությունները:

Այս խնդրին էլ ավելացավ համաշխարհային կովիդ-19 համաճարակը և իր հերթին ձևափոխեց խաղի կանոնները. հեռավար կրթությունը դարձավ դասախոսի և ուսանողի, ուսուցչի և աշակերտի, տարբեր ոլորտներում աշխատող մարդկանց կյանքի ու առօրյայի անբաժան մասը:

ԿԳՄՍ նախարարի հրահանգով այս տարի դիմորդները բուհեր կընդունվեն մեկ քննությամբ: Թե ինչպիսին կլինեն արդյունքները և գիտելիքների ինչ մակարդակ ունեցողները ոտք կդնեն բուհերի շեմից ներս՝ ցույց կտա ժամանակը: Արդեն տեսանելի է, որ դիմորդները հիմնականում սևեռվել են մաթեմատիկական մասնագիտությունների վրա, և այս դեպքում մրցույթ հաղթահարելու խնդիր կունենան: Ուսանողների սակավ թվաքանակն էլ իր կանոններն է թելադրում, և համալսարաններ ընդունվում է թույլ, միջին մակարդակ ունեցող դիմորդների մի շերտ, որի արդյունքում դպրոցն ու բուհը մշտապես իրար մեղադրողի կարգավիճակում են….

Դեռ լավ է, որ կա ուսուցչի մասնագիտությունը, որը բոլոր ժամանակների համար արդիական է: Այդ մասնագիտությունն ընտրում են հիմնականում մարզերի դպրոցների շրջանավարտները: Մանկավարժական համալսարանն այդ տեսանկյունից առնչվում է հանրապետության բոլոր մարզերի հետ, կամա-ակամա հաղորդակցվում նրանց խնդիրներին, աջակցություն ցուցաբերում:

Սիրելի՛ ապագա մանկավարժներ, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը սիրով իր դռներն է բացել ձեր առաջ: Եթե սիրում եք ուսուցչի աշխատանքը՝ ուրեմն ճիշտ եք ընտրել ձեր ապագա մասնագիտությունը, և ուրախ ենք, որ ձեր ընտրությունը կանգ է առել Մանկավարժական համալսարանի վրա: Ուսուցչի մասնագիտությունն աշխարհի ամենալավ ու ամենաժամանակակից մասնագիտությունն է: Սիրով սպասում ենք ձեզ՝ ապագա մանկավարժներիդ:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ՌԱԶՄԻԿ ԴԱՎՈՅԱՆ

ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ - 1

Քայլիր մի գիշեր, և երկու գիշեր,
և այնքան, որքան կարող ես քայլել,
գուցե այն աստղը կհայտնաբերես,
որ մարդկանց համար բնավ
չի փայլել:
Գնա մի տարի, և երկու տարի,
և այնքան, որքան կարող ես գնալ,
և գնա նույնիսկ այն դժնի պահին,
երբ որ քայլելն է թվում անհնար:
Քայլիր մի տարի, և միլիոն տարի,
մինչև որ հասնես նախապապերիդ,
մի գնահատիր ոչ անցած ճամփադ,
և ոչ էլ չնչին արժեքը բեռիդ:
Եվ եթե հասնես նախապապերիդ,
ուրեմն՝ մոտ ես և ապագային.-
քեզանից առաջ, նրանք շատ առաջ,
բյուր դարեր առաջ ճամփա են ելել,
և նրանք են, որ մոտիկ են արդեն
ապագաներին բոլոր նոր ու հին:
Եվ եթե հանկարծ քո ճանապարհին
նախապապերիդ դու չհանդիպես,
ուրեմն՝ սխալ ճամփով ես գնում,
և ոչ մի հրաշք չի՛ փրկելու քեզ:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ

Մանկավարժական համալսարանի Ընդունող հանձնաժողովը հրապարակել է 2020-2021 ուսումնական տարվա առկա մագիստրատուրայի 1-ին փուլի արդյունքները, ըստ որի 217 դիմորդներից առկա ուսուցմամբ համակարգի մագիստրատուրայի անվճար համակարգ է ընդունվել 90-ը:

Անվճարի փուլը չհաղթահարած դիմորդները վճարովի ուսուցմամբ համակարգ ընդունվելու համար պետք է նորից ներկայացնեն դիմում-հայտ՝ https://dimord.aspu.am/ կայքում:

Մեկնարկել է առկա և հեռակա ուսուցմամբ վճարովի ուսուցման համակարգի ընդունելությունը՝ հուլիսի 6-ից մինչև օգոստոսի 24-ը՝ առկայի, մինչև օգոստոսի 25-ը՝ հեռակայի համար:

ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՐՏՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԿՇՌՈՂ ԷՐ

Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի պարարվեստի մանկավարժության ամբիոնի ղեկավարությամբ ամեն տարեվերջի ուսանողների ավարտական քննությունը ներկայացվում է խորեոգրաֆիկ հետաքրքիր լուծումներով հագեցած թեմատիկ պարային բեմադրություններով, որոնք ոչ միայն հանդիսատեսին հաճույք են պատճառում, այլև փաստում այն մեծ աշխատանքը, որ կատարվում է պարային բաժինն ընտրած ուսանողների հետ:

Երկիր մոլորակին պատուհասած աղետալի համավարակը փոխեց նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության կանոնարկված ձևերը, չեղարկեց ավանդույթները՝ այդ ամենը տեղափոխելով առցանց հարթակ: Գաղտնիք չէ, որ կան մշակութային մասնագիտություններ, որոնց ներկայացնելը հեռավար կոչվող ձևաչափում կարծեք թե անհնար է պատկերացնել, բայց, ինչպես ասում են, համավարակը պարտադրեց անհնարը հնարավորին դարձնելու մեթոդներ գտնել:

ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի պարարվեստի ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Կարեն Գևորգյանի հետ զրուցեցինք վերոհիշյալ հարցերի շուրջ՝ փորձելով տեղեկանալ պարարվեստի մանկավարժություն մասնագիտության այս տարվա շրջանավարտների քննական ձևաչափի ու արդյունքների մասին:

Այս տարի ամբիոնն ունեցել է առկա ուսուցման համակարգի 46, հեռակա ուսուցման համակարգի 35 և մագիստրատուրայի 11 շրջանավարտ: Կարեն Գևորգյանը տարեվերջյան արդյունքները բարձր գնահատեց, չնայած պարային բաժնի ավարտական կուրսի ուսանողների ներկայացման համար անսովոր պայմաններին:

Ավարտական ամփոփիչ ատեստավորման քննական հանձնաժողովը նախագահել է արվեստագիտության թեկնածու, պարարարվեստի տեսաբան Նաիրա Կիլիչյանը, ով շատ բարձր գնահատեց քննությանը ներկայացված աշխատանքները:

«Պետք է ընդգծել, որ շատ տպավորված եմ համալսարանի պարարվեստի մանկավարժության ամբիոնի առկա, հեռակա և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ուսանողների ներկայացրած աշխատանքներից, հեռավար քննության կազմակերպվածությունից, դասախոս-ուսանող համատեղ աշխատանքի արդյունավետությունից և առհասարակ պարարվեստի մանկավարժության ամբիոնի աշխատանքից: Նախապատրաստական աշխատանքը լավագույնս կազմակերպված էր. նախապես առցանց տեղադրված էին ուսանողների կողմից պատրաստված տեսաերիզներ, անիմացիոն և նկարագրական աշխատանքներ: Խոսքս ոչ միայն քննությունների լավ կազմակերպմանն է վերաբերում, բովանդակային տեսանկյունից ևս աշխատանքները խրախուսման արժանի էին, ինչը ցույց էր տալիս ուսանողների մասնագիտական պատրաստվածության մակարդակը»,-ասում է Նաիրա Կիլիչյանը, ով ևս Կուլտուրայի ֆակուլտետի պարարվեստի բաժնի 1979-1983 ուստարվա շրջանավարտ է: Տարիներ հետո լինելով քննական հանձնաժողովի նախագահ՝ նա հպարտությամբ է խոսում հարազատ ֆակուլտետի և պարարվեստի մանկավարժության բաժնի, ուսանողների հետ տարվող ստեղծագործական աշխատանքների մասին: Նա հատկապես մատնանշում է մագիստրոսների աշխատանքներում ներկայացված պարարվեստի ոլորտի մերօրյա խնդիրները, բակալավրիատն ավարտող ուսանողների ստեղծագործական միտքը ազգային ավանդական պարերի ուղղվածությամբ, հեռակա համակարգի ուսանողների՝ ոլորտային խնդիրների հանդեպ տարբեր ձևաչափերով նոր մոտեցումները և փաստում ամբիոնի՝ տարիների տքնաջան աշխատանքը:

Այս տարվա ավարտական կուրսի ղեկավար Կարեն Գևորգյանն ափսոսանքով է խոսում դեռևս հունվարին Մհեր Մկրտչյանի 90-ամյակի առթիվ խնամքով նախապատրաստված պարային խորեոգրաֆիկ մեծ աշխատանքի մասին. «Խոշոր շահում» ֆիլմի հիման վրա ստեղծված պարային բեմադրության մեջ ավարտական կուրսի յուրաքանչյուր ուսանող իր առանցքային դերն ուներ՝ պարային կերպարի մատուցման առանձնահատկություններով հանդերձ, որը պետք է լրացներ ամբիոնի տարեվերջյան թեմատիկ ուղղվածությամբ խորեոգրաֆիկ ներկայացումների շարքը…:

«Ներկայացումների հիմնական մասը նկարագրական էր. ուսանողների պաշտպանական թեզերը վերաբերում էին պարարվեստի հիմնախնդիրներին, այնուամենայնիվ, տեսագրված որոշ հատվածներ քննական հանձնաժողովին ներկայացվեցին տեսաերիզների միջոցով,- ասում է ամբիոնի վարիչը:- Իսկ գերազանցությամբ ավարտողների թիվը գերակշռող էր, որովհետև արդյունքների գնահատումը նոր բացահայտում չէր հեռավար քննության ընթացքում, դա ուսանողների՝ ուսումնական տարվա քրտնաջան աշխատանքի արդյունքն ու գնահատումն էր»:



Հուսանք՝ այս փորձությունը ազգովի կհաղթահարենք, և հաջորդ տարիներին պարարվեստի մանկավարժություն մասնագիտության շրջանավարտները բեմերի գեղեցիկ ու լուսավոր հարթակներից դասախոսներին ու հանդիսատեսին հպարտորեն կներկայացնեն բեմարվեստի իրենց գիտելիքներն ու վարպետությունը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ



Հայ մեծ բանաստեղծ, ՀՊՄՀ շրջանավարտ Ռազմիկ ԴԱՎՈՅԱՆԸ 80 տարեկան է

Երեկ տխուր, այսօր ուրախ,
Ալիքի պես ծափ եմ տալիս,
Երեկ՝ դեպի անհայտություն,
Այսօր դեպի ափ եմ գալիս:

Լուռ ժպտում եմ փոքր ու մեծին
Կամ ծիծաղում խենթի նման,
Ինձ բաշխում եմ ավազներին
Անապատի գետի նման:

Ինձ բաշխում եմ անմնացորդ,
Իմ ժպիտներն ո՞ւր են տանում,-
Ծիծաղիս մեջ ամեն անցորդ
Հոգնած հոգին է լվանում:

Վաղը երբ որ մշուշ լինի,
Եվ արցունքներ ծնվեն ցավից,
Գուցե մեկը փոքրիկ մի կայծ
Ետ բերի ինձ իմ ծիծաղից:

***

Ոչինչ չեմ հասկանում տագնապներից սրտիս,
Սրտիս թրթիռներից ոչինչ չեմ հասկանում,
Մեկ նայում եմ ծովի տրտմությանը փափուկ,
Մեկ լսում եմ ծովից վերադարձող քամուն.
Եմ իմ սրտից, սրտիս տագնապներից անմիտ
Ոչինչ չեմ հասկանում, ոչինչ չեմ հասկանում:

Իմ ուղեղի անծայր միրաժի մեջ ընկած,
Հստակ պատկերների իմացությամբ անզոր,
Կույր աշխարհի հզոր անեզրության առաջ
Ես՝ անհեթեթ, անմիտ, տառապում եմ այսօր -
Էլ ո՞վ արդյոք ինձ նոր երազանքներ կտա՝
Իմ աննշմար աստղի ճառագայթին հասնող:

Ո՞վ կտա ինձ, էլ ո՞վ…
Ինքս ինձ օրորելով,
Քնեցնում եմ ծովի կապույտի մեջ անծիր,
Եվ ես՝ կարոտների մի մանրամաղ թանձիվ,
Ես ալիքից ալիք թռչկոտում եմ հերթով՝
Ինձ քարշ տալով լուսնի խոնավ արահետով:

Ոչինչ չեմ հասկանում տագնապներից սրտիս,
Ոչինչ չեմ հասկանում.-
Սեր իմ, քո անունը վրաս սարսուռների
Ոսկեդեղին մշուշ - մղեղներ է մանում,
Սեր իմ, քո աչքերը իմ չարչարված հոգուց
Համր թռչունների երամներ են հանում,
Նրանք ճայերի պես ալիքներիս միջից
Կարոտներիս ոսկե ձկնիկները մեկ-մեկ
Կտցում են ու տանում:

Ո՞ւր են տանում, սակայն, սեր իմ, ո՞ւր են տանում,
Ո՞ւր կարող են տանել,
Երբ ամեն ինչ հիմա ամուր շղթաներով
Բանտված է իմ հոգու մութ զնդանում,
Երբ ամեն մի թողած հառաչանքիս դիմաց
Հազար արձագանք եմ ետ ստանում:

Եվ ես հիմա նստած այս հեռավոր ափին,
Ղրիմյան այս այրված ու ծանձրալի հեռվում,
Խրախճանքի ելած ամբոխների միջով
Քո հեռավոր ու պարզ տեսիլքին եմ մերվում:

Եվ շողի պես խոնավ շրթունքներիդ վրա
Պսակում եմ բառերն անմեկնելի լույսով,
Եվ ապրում եմ այսպես՝ անհեթեթ ու անմիտ՝
Ինչ-որ դատարկ մի օր էլ չապրելու հույզով:

ՈՒսուցչի դիմանկար. Մանանա Կարապետյան

Հայկական սփյուռք. կյանքը ինչպես որ է...

Թբիլիսիի №131 ռուս-հայկական միջնակարգ դպրոցում աշխատել սկսել եմ 1995 թվականի հոկտեմբերից, երբ «Վրաստան» թերթի խմբագրությունում աշխատում էի վրացերեն-հայերենի թարգմանչուհի և խմբագիր Վան Բայբուրթի մի հանձնարարությամբ գնացել էի նորաբաց հայկական դպրոցի միջոցառումներից մեկի մասին նյութ բերելու: Այդ ժամանակ Թբիլիսիի «Աֆրիկա» կոչված ծայրամասի հայահոծ թաղամասում, 1965 թվականից գործող ռուսական դպրոցին կից, մի խումբ հայրենասերների համառ ջանքերով, որոնցից հատկապես հարկ է նշել Վան Բայբուրթին, Սամվել Պողոսյանին և երջանկահիշատակ Երջանիկ Ղանդիլյանին, ովքեր տնետուն էին շրջում և հայկական բաժնի համար երեխաներ հավաքագրում, արդեն 1991 թվականին Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի օրոք և նրա անմիջական թույլտվությամբ բացվել և գործում էր հայկական բաժնի 1-4-րդ դասարանները:

Երկրորդ դասարանի դասվար Վարդ Կարապետյանը, առողջական խնդիրների պատճառով, անհապաղ պետք է թողներ իր դասարանը և ինձ թախանձագին խնդրեց փոխարինել իրեն: Ես այդ ժամանակ համապատասխան մանկավարժական կրթություն չունեի, թեև 1976 թվականին գերազանց առաջադիմությամբ ավարտել էի Թբիլիսիի № 40 հայկական միջնակարգ դպրոցը, այնուհետև 1982 թվականին ավարտել Թբիլիսիի Իլիա Ճավճավաձեի անվան օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտի երկամյա դասընթացները, ինչպես նաև 1982-1988 թվականներին սովորել և ավարտել էի Լենինգրադի «Պատվո նշանի» դափնեկիր Բարձրագույն արհմիութենական մշակույթի դպրոցը՝ մշակութային-լուսավորչական աշխատանքների բարձրորակ կազմակերպիչ-մեթոդիստի մասնագիտությամբ, նաև ավարտել էի Էրմիտաժին կից գործող Կերպարվեստի ժողովրդական համալսարանի ազատ ունկնդրի եռամյա դասընթացները:

Ես հանձն առա հայկական բաժնի տարրական դասարանի դասվարությունը, սակայն դպրոցի աշխատանքին զուգահեռ, որոշեցի 1996 թվականին ընդունվել և 2001 թվականին կարմիր դիպլոմով ավարտեցի Թբիլիսիի Սուլխան-Սաբա Օրբելիանու անվան պետական մանկավարժական համալսարանի վրաց բանասիրության ֆակուլտետը՝ հայոց լեզվի, գրականության և վրաց լեզվի, գրականության ուսուցչի մասնագիտությամբ: Արդեն լիիրավ կարող էի աշխատել իմ սիրած մասնագիտությամբ՝ գիտելիքներ փոխանցել և կրթել մեր դպրոցի հայ մանուկներին, նրանց մեջ հայրենասիրություն սերմանել: Մինչև 2011 թվականը հայոց լեզու, գրականություն, վրաց լեզու գրականություն, պատմություն, Հայ եկեղեցու պատմություն և այլ հումանիտար առարկաներ եմ դասավանդել իմ դպրոցի միջին և բարձր օղակներում, իսկ 1999 թվականից մինչև 2001 թվականը ստանձնեցի նաև նույն դպրոցի դաստիարակչական գծով փոխտնօրենի պաշտոնը, որից սակայն ստիպված էի հրաժարվել իմ ընտանեկան դժբախտության՝ ամուսնուս անժամանակ մահվան պատճառով, ինձ պահելով միայն հայ ուսուցչի և դասվարի աշխատանքը:

2003 թվականից մեր դպրոցում հիմնեցի և մինչև 2010 թվականը լույս ընծայեցի դպրոցական հայատառ «Զրուցակից» ամենամյա պարբերաթերթը, որի էջերում մեր դպրոցի առօրյան, աշակերտների առաջին թոթովանքները, քաղաքի և անգամ Հայաստանի հետ ունեցած մեր կապերն էինք լուսաբանում: Մեր դպրոցի շրջանավարտներն աչքի էին ընկնում բարձր առաջադիմությամբ, 2008 թվականին մեր հինգ շրջանավարտներից երեքն ստացան ոսկե մեդալ, քիչ չէր նաև զանազան բուհերում ուսումը շարունակող մեր շրջանավարտների թիվը: Մատաղ սերնդի հայեցի դաստիարակմանը, հայրենասիրության և հայապահպան գործունեության ծավալմանը խորապես նպաստեցին Հայաստանում անցկացվող սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացները, որին ես առաջին անգամ մասնակցեցի 2005 թվականին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանավորությամբ, ՀՀ ԿԳ նախարարության և Կրթության ազգային ինստիտուտի համատեղ ջանքերով: Այնուհետև գրեթե ամեն տարի աշխատել եմ բաց չթողնել ոչ մի միջոցառում, որն անց էր կացվում Հայաստանում՝ սփյուռքահայ դպրոցականների Համահայկական օլիմպիադա և հայագիտական գիտելիքների մրցույթ, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոն, Համահայկական խաղեր, ինչպես նաև «Արի տուն», «Ամառային դպրոցի դասընթացներ», «Համահայկական կրթական խորհրդաժողովներ», «Լրագրողների խորհրդաժողովներ» և մասնակցել սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման գրեթե բոլոր դասընթացներին, վերջինը՝ 2017 թվականին: Այս ամենի, ինչպես նաև վիրահայ համայնքի վերջին 2-3 տասնամյակների կրթական և մշակութային կյանքի մասին ստեղծել եմ իմ նկարահանած տեսահոլովակների և լուսանկարների հսկայական հավաքածու: Զբաղվում եմ նաև թարգմանչական գործով՝ վրացերենից և ռուսերենից հայերեն թարգմանում դասագրքեր, գրական, կրթական և իրավաբանական բնույթի հոդվածներ:

2012 թվականին ՀՀ սփյուռքի նախարարության և Համաշխարհային հայկական կոնգրեսի կողմից պարգևատրվել եմ դիպլոմով «Հայապահպանության գործում ունեցած նշանակալի ավանդի համար» և «Մայրենիի լավագույն ուսուցիչ» անվանակարգում ստացել երկրորդ կարգի մրցանակ: Բազմիցս պարգևատրվել եմ պատվոգրերով և շնորհակալագրերով, ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի ԿԳ նախարարությունների համապատասխան կառույցների կողմից, որոնք ոգևորում, նոր լիցք ու եռանդ են հաղորդում, երբ գնահատվում է աշխատանքդ...

Ամառային արձակուրդներին սփյուռքում աշխատող հայ ուսուցիչներիս համար ամենամեծ լիցքը և ամենահագեցած հանգիստը տալիս էին այն միջոցառումները, որոնք անց էին կացվում Հայաստանում, թեկուզ հեղձուցիչ, տապ օրերին, բայց աշխարհի բոլոր ծայրերից մեկտեղ հավաքված հայ կրթական ոլորտի աշխատակիցների, լավագույն դասախոսների, դպրոցների տնօրենների, ուսուցիչների, մշակույթի գործիչների մասնակցությամբ՝ փորձի մեծ փոխանակության մթնոլորտում:

Անմոռանալի են հատկապես ՀՀ նախկին ԿԳ նախարարության կողմից հաստատված ծրագրերով, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնում անցկացվող դասընթացները (տնօրեն՝ պրոֆեսոր Սուրեն Դանիելյան), որտեղ պարապմունքներն ընթանում էին մի քանի խմբերում և նպաստում մեր գիտելիքների հարստացմանը հայոց լեզվի, գրականության, մանկավարժության, հոգեբանության, պատմության, աշխարհագրության կրոնի, մշակույթի՝ կերպարվեստի, երաժշտության, ազգային պարերի, հայ թատրոնի, ազգային ավանդական ծեսերի, դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ, զինում մեզ նոր, անհրաժեշտ գիտելիքներով, լրացնում մեր գիտելիքների պակասը, սպառիչ պատասխաններ տալիս մեզ հուզող հարցերին: Դասախոսությունները վարում էին դոկտոր, պրոֆեսորներ, հայկական բուհերի առաջատար դասախոսներ, գիտաշխատողներ, մասնագիտական գրքերի հեղինակներ, որոնց հետաքրքիր դասախոսությունները, անգամ երևանյան այն շոգ օրերին, ընկալվում էին մի առանձին հետաքրքրությամբ: Սիրով ուզում եմ թվել մի քանի անմոռաց անուններ՝ Սուրեն Դանիելյան, Ջուլիետա Գյուլամիրյան, Աելիտա Դոլուխանյան, Անահիտ Մկրտչյան, Դավիթ Գյուրջինյան, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյան, պրոֆեսոր Յուրի Յուզբաշյան, Կամո Վարդանյան, Գագիկ Գինոսյան և քանի-քանի լավագույն դասախոսներ, բոլորին թվելն անկարելի է, սակայն խորին շնորհակալություն բոլորին՝ իրենց ներդրած ավանդի համար:

Դասընթացներին հաճախ կայանում էին նաև հետաքրքիր հանդիպումներ և ընդհանրական դասախոսություններ պետական գործիչների, բարձրաստիճան պաշտոնյաների, ժամանակակից գրողների, մանկագիրների, մշակույթի գործիչների հետ, իսկ դասախոսություններից հետո կամ հանգստյան օրերին այցելում էինք Հայաստանի տեսարժան վայրեր:

Իր դերն ուներ նաև տարբեր վայրերից ժամանած մասնագետների փորձի փոխանակումը, միմյանց հետ ծանոթացումն ու բարեկամական նոր կապերի ստեղծումը աշխարհասփյուռ հայության հետ: Դասընթացների ավարտին էլ մեզ հանդիսավոր հանձնում էին համապատասխան հավաստագրեր, ուսումնամեթոդական և գեղարվեստական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, խտասալիկներ, ձայներիզներ և այլ հուշանվերներ: Այնուհետև, այս ամբողջ տեսածն ու լսածը մենք փոխանցում էինք մեր աշակերտներին:

Սակայն, տարիների հետ շատ բան փոխվեց... 2012 թվականից 20-ամյա պատմությամբ մեր դպրոցը «վերակազմավորման» ենթարկվեց, և փակվեցին հայկական և ռուսական բազում դպրոցներ: Մեր մեծ աշակերտություն ունեցող դպրոցին միացրին № 205 փոքրաքանակ վրացական դպրոցը, և մեր աշակերտների մեծ մասը ստիպված էր հայկական №104 կամ ռուսական դպրոց տեղափոխվել՝ կտրելով երկար տարածություն: Մի մասն էլ նախընտրեց ուսումը շարունակել դարձյալ №131 դպրոցի իր նույն դասարանում, սակայն ուսումը շարունակելով վրացերեն, առանց տարին կորցնելու...

Այն երեխաները, ովքեր հայրենասիրությամբ և հայապահպանությամբ լցված՝ ի վիճակի էին կտրել հսկայական հեռավորությունը, որպեսզի ծայրամասից հասնեն քաղաքի կենտրոնում գտնվող № 104 հայկական դպրոցը, գնացին լրացնելու այդ դպրոցի հայկական դասարանները, իսկ նրանք, ովքեր տարբեր լուրջ պատճառներ ունեին, մնացին № 131 դպրոցում և անցան վրացերենով բոլոր առարկաների ուսուցմանը:

Մեր դպրոցի հայ ուսուցիչները մնացին առանց աշխատանքի, քանի որ № 104 դպրոցն անկարող էր աշխատանքի ընդունել աշխատատեղից զրկված տարբեր դպրոցների բոլոր հայ ուսուցիչներին:

Մեր դպրոցում տնօրենը մեզ առաջարկեց մասնակցել ուսուցիչների ատեստավորմանը և քննություններ հանձնել, համապատասխան հավաստագրեր ստանալ՝ դպրոցում վրացերենով աշխատանքը շարունակելու համար: Ես 2013 թվականին վրացերենով հանձնեցի մանկավարժական հմտությունների, 2015 թվականին կերպարվեստի ուսուցչի, 2016 թվականին օտար լեզվի՝ ռուսերենի և նույն թվականին՝ վրացերենը որպես երկրորդ լեզու առարկայական քննությունները: 2015 թվականից ինձ շնորհվել է ավագ ուսուցչի կարգավիճակ՝ աշխատավարձի համապատասխան բարձրացումով: Այնպես որ, ես դեռ շարունակում եմ մնալ իմ հարազատ № 131 դպրոցում, թեև տարիքս արդեն մոտեցել է կենսաթոշակայինին, սակայն ինձ փոխարինող նոր ուժերը դեռ մեր դպրոց մուտք չեն գործել... Ես էլ այստեղ անելիքներ դեռ շատ ունեմ, դեռ փայփայում եմ այն երազանքս, որ մի օր դարձյալ մեր դպրոցի հայազգի աշակերտները, որոնք դեռ հիմա էլ զգալի թիվ են կազմում, կվերադառնան իրենց արմատներին, գոնե մեկ ժամ՝ հայերեն գրել-կարդալ կսովորեն...

Ես շարունակում եմ դիմել տարբեր միջոցների, սակայն խոչընդոտները դեռևս անհաղթահարելի են: Ինձ մնում է միայն արվեստի իմ ժամերին և դասերից դուրս՝ աշակերտներիս չկտրել հայ մշակութային կյանքից, իրենց արմատները ճանաչելուց, իսկ այլազգի աշակերտներիս մոտ սեր և հարգանք առաջացնել հայ ընկերների նկատմամբ, ծանոթացնելով նրանց հայ մշակույթին: Ես մեծ հույսեր եմ կապում նաև 2009 թվականից Երևանի Զոն Կիրակոսյանի անվան № 20 դպրոցի հետ կնքած մեր «Քույր դպրոցներ» կարգավիճակը խթանելու, մեր հայ-վրացական դպրոցների միջև բարեկամությունն ամրապնդելու ուղղությամբ ծրագրերի իրականացման հետ, որով բազմիցս դիմել եմ համապատասխան կառույցներին, բայց դեռ սպասում ենք հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև ներկա իրավիճակի շուտափույթ կարգավորմանը:

Մանանա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Թբիլիսիի № 131 հանրային դպրոցի ավագ ուսուցչուհի, դպրոցի Գեղագիտության և սպորտի ամբիոնի ղեկավար
Վրաստան

ԻՄ ԱՐԱՐԱՏԸ

Մարդու էությունը կազմում են անթիվ-անհամար մասնիկներ՝ հասկացություններ, զգացողություններ, մտքեր, պատկերացումներ, ձայներ, գույներ, բույրեր, պատկերներ, տպավորություններ, հանդիպումներ, ապրումներ, զգացմունքներ, սպասումներ, մարդիկ, իսկ ավելի ճիշտ՝ նրանց էությունների՝ քեզ վրա ունեցածթողած ազդեցությունները…

Դրանք ամբողջ կյանքի ընթացքում հավաքվում են, հարազատանում, դառնում միաձույլ ու անբաժանելի էություն՝ դու: Եվ այս կյանքում ոչ ոք չի կարող լիովին ճանաչել այդ էությունը, որը գտնվում է չգիտեմ որտեղ՝ սրտո՞ւմ, մտքո՞ւմ… արդյոք դա հոգի՞ն է… չգիտեմ, բայց դա դու ես՝ եզակի՝ միակը… Եվ այդ էության մեջ զտվում-պահվում է քեզ համար ամենաթանկը. և դա միայն քոնն է, և դա՛ ես դու…

Շվեյցարական փոքրիկ քաղաքում եմ, որի անունը ֆրանսերեն հնչում է «Ֆրիբուրգ», գերմաներեն՝ «Ֆրայբուրգ»: Լեռների սրտում ամբողջությամբ թավշականչ անտառներով ծածկված լանջերին տեղավորված գողտրիկ քաղաք է Ֆրիբուրգ-Ֆրայբուրգը, որը ձորում հանդարտահոս գետով բաժանվում է ֆրանսիական և գերմանական մասերի, սակայն հենց նույն տեղում էլ հին, նոր ու նորագույն կամուրջներով անմիջապես միավորվում է մեկ շնչով ու ռիթմով ապրող քաղաքի…

Վաղեմի բարեկամներիս հետ (մեր բարեկամությունը՝ միմյանց նկատմամբ բարի կամքն ու կամեցողությունը, 18 տարվա ամրություն ունի) քայլում-թափառում ենք հին քաղաքի գողտրիկ փողոցներով, ու թվում է՝ ամենևին էլ 21-րդ դարում չեմ, այլ ժամանակային, տարածական, մշակութային բոլորովին ուրիշ հարթությունում՝ հեռու ամեն տեսակ պատերազմներից, քաղաքական աղբից, մարդկային արատներից ու ողբերգություններից… Ուրիշ մի աշխարհ է, որի փողոցային ամեն մի անկյունադարձից հետո նոր՝ մյուսներից բոլորովին տարբեր փոքրիկ հրապարակ կամ նեղլիկ մի փողոց է բացվում հայացքիդ հեռանկարում, որը իր գաղտնիքն ունի… Եվ ամենից շատ հենց այդ «հեռանկարով» փողոցներն եմ սիրում՝ շատ նեղլիկ, դարձդարձումներով փողոցները, որոնց մյուս ծայրը չի երևում, սակայն շենքերի անկյունապատերի, պատշգամբների, լուսամուտների ու տանիքների միահյուսված ու չավարտվող մի հեռապատկեր է նկարվում հայացքիդ մեջ, որը բարձրանալով՝ բացվում է դեպի երկնքի կապույտը ձգվող աշտարակներով… Իսկ ներքևում մեկը կանգնած ծխում է (տեսնես ի՞նչ է մտածում…), մի ուրիշ տեղ երկու հոգի զրուցում են… մի կատու՝ իր գործերին հետամուտ, ծուլորեն անցնում է կողքովդ… ու ծաղիկներ, ծաղիկներ, անհամար ծաղիկներ ամենուր…

Նայում եմ աջ ու ձախ՝ փորձելով այս ամենը հիշողությանս մեջ լուսանկարել, պահել-կուտակել… Հանկարծ հայացքս կարդում է «Արարատ»… հայ մարդու էության մի մասնիկը կազմող այս անունպատկերը, բնականաբար, վայրկենաբար արձագանքում է մտքումս ու սրտումս, և աչքերս սկսում են որոնել հայի ու հայկականության ներկայության այլ հետքեր ևս: Ինչպե՞ս, հա՞յ. այս ուրիշ ժամանակներում, ուրիշ աշխարհում, ուրիշ հարթության մեջ… հա՞յ… Ահա՛, հիմա հերթական անգամ կկատարվի այն, ինչ կատարվում է, երբ օտար աշխարհում «հայը հանդիպում է հային». լռում է համայն տիեզերքը ու հետևում հայի տիեզերքին, որ բացվում է, երբ օտար հողում «հանդիպում են հայը ու հայը»…

Ու մինչ ես հայացքով տենդագին փնտրում եմ իմ հայկականությունը, բարեկամուհիս բարձրաձայն կարդում է փակ դռան ապակու վրա գերմաներեն գրվածը: Այդ ամբողջ շղթայից ուղեղիս

մեջ մի բառ է մեխվում՝ «Անատոլիա» կամ «անատոլիական»…, որը սրտումս ծնում է անհասկանալի, մինչ այդ չապրված ու անծանոթ զգացում… դրա ինչ լինելը չգիտեմ և անվանել չեմ կարողանում դեռևս…

Ոչինչ չեմ ասում, շարունակում ենք քայլել (տեսնես Ռուքսին ի՞նչ մտածեց այն պահին, երբ ձայնիս ու հայացքիս մեջ բոցավառված ոգևորությունը հանկարծ ընդհատվեց)… Այլևս ոչինչ չեմ տեսնում, բայց մտապատկերներիս խառնաշփոթի մեջ մեկիկ-մեկիկ վերականգնվում ու գնահատվում են տեսածիս պատառիկները… Փաստորեն, ես հայկական ոչինչ չէի տեսել. տառերը, որոնցով գրված էր անունը, հայերեն չէին. այո՛, դրանք, անշուշտ, լատինական տառեր էին, բայց ախր բոլորովին «հայերեն» չէին ո՛չ իրենց ձևով, ո՛չ շնչով, ո՛չ տրամադրությամբ… ո՛չ մի հարազատ բան չկար այդ գրառման մեջ, այդպիսի տառատեսակով ոչ մի անգամ «Արարատ» գրված չէի տեսել. ամեն ինչ օտար ու խորթ էր այդ բառապատկերի մեջ…

Հետո մտքումս վերականգնվեց սարի պատկերը… սա նույնպես մեր Արարատի՝ իմ Արարատի հետ ոչ մի առնչություն չուներ, և ամենևին էլ ո՛չ այն պատճառով, որ, անշուշտ, դիտված էր հակառակ կողմից, և սարերի հաջորդականությունը պետք է որ տարբեր լիներ,- ո՛չ, դա բոլորովին ուրի՛շ սար էր, և ես չէի ճանաչում այդ սարը, ահա թե ինչո՛ւ չէի տեսնում իմ սարը, երբ հայացքով հայկականություն էի փնտրում…

Քայլում եմ լուռ, բայց գլխումս աղմուկ է, մտքերս՝ խռնված, կամաց-կամաց պարզվում են, ու հասկանում եմ, որ էությունիցս ինչ-որ շատ թանկ ու նվիրական բան եմ կորցրել… մի տեսակ կողոպտված, թալանված եմ կարծես…, որովհետև Արարատից ինձ մնացել է միայն ձայնը՝ բառի հնչապատկերը…

***

Հիմա Երևանում եմ, սա իմ տունն է, և Արարատը ամուր-ամուր գրկել-պահել եմ հայացքիս մեջ…

2018 թ.

Լիլիթ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԴԱՐՁԱԻ ԱՆԿԻՒՆԱԴԱՐՁԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄ

Քանի մը օր առաջ ստացայ նամակ մը հալէպահայերուս քաջ ծանօթ «Հայագիտական ամպիոնի» շատ սիրելի դասախօս Տիկ. Ջուլիէթայէն, եւ յիշողութիւններս զիս տարին 1994 թուական...

Սուրիոյ ուսումնական համակարգը տասներկու տարի է, որուն աւարտին աշակերտը պարտի յանձնել պետական քննութիւններ եւ ըստ այդ քննութիւններուն արդիւնքին կրնայ ընդունուիլ այս կամ այն համալսարանը: Ինծի բաժին ինկաւ ուսումնարան մը: Իմ երազանքս Հայաստան երթալ ու հայոց լեզու եւ գրականութիւն ուսանիլն էր: Բայց այդ օրերուն երազանքս որքան անիրականանալի կը թուէր ըլլալ: Ընտանիքիս նիւթական պայմանները երբեք չէին ներեր: Այդ պատճառով իսկ ընդունուեցայ պետական ուսումնարան, բայց եւ այնպէս ներքուստ կը զգայի, որ օր մը պիտի կարենամ իրականացնել այն ինչ կ'երազէի, բայց ինչպէ՞ս ես ալ չէի գիտեր:

Սուրիահայ միութենական կառոյցները իրենց գոյութեան առաջին օրէն նպատակ ունեցած են հայապահպանման գործը. «Համազգայինի Հայագիտական ամպիոնը» անվարանօրէն կարելի է սեպել մեր գաղութի պատմութեան ամէնէն յաղթական իրագործումներէն մէկը: Կառոյց մը, որ մինչեւ օրս, այս դժուարին պայմաններուն մէջ դեռ կը շարունակէ գոյատեւել: Անոր շրջանաւարտները ոչ միայն իրենց ստացած ուսումով կրցան ծառայել սուրիահայ հայկական դպրոցներուն, այլ նաեւ պատերազմական դժնդակ պայմաններուն բերումով ստիպուեցան գաղթել՝ ծաղկեցնելու այլ գաղութներ եւ նպաստել անոնց գոյատեւման: Փառք ու պատիւ սոյն հիմնարկի հիմնադիրներուն, որոնք հետեւ անոնց այս փայլուն նախաձեռնութիւնը մեծ թիւով երիտասարդներու անիրական թուացող երազանքը դարձուց իրականութիւն:

Հայաստան հայագիտական կրթութիւն ստանալ ուզող, բայց նիւթական հնարաւորութիւն չունեցող երիտասարդներուս համար «Համազգայինի Հայագիտական Հիմնարկը» հնարաւորութիւն մըն էր:

Որքան ուրախ օր մըն էր ինծի համար, երբ լսեցի, որ Համազգայինը բացած է քառամեայ Հայագիտական ամպիոն մը: Հալէպահայ գաղութը հարուստ էր իր մտաւորականներու հոյլով, որոնք կը կազմէին այդ հիմնարկի դասախօսական կազմը եւ իրենց գիտելիքներով առաւել փայլք ու հմայք պիտի տային սոյն հիմնարկին:

Որոշեցի իմ վաղեմի երազանքս հետապնդել եւ հետեւիլ անոր դասընթացքներուն:

Հայագիտական ամպիոնի քառամեայ դասընթացքներուն աւարտին, երբ արդէն կը կարծէի, որ երազանքս իրականացած էր ու պիտի բաւարարուիմ «Համազգայինի Հայագիտական ամպիոն»-ի վկայականով ու շարունակեմ, արդէն ուսանողական երկրորդ տարին սկսած իմ ուսուցչութեան ասպարէզս, պատահեցաւ հետաքրքրական եւ յոյս ներշնչող նորութիւնը: Հայագիտական ամպիոնը ստորագրեց պայմանագիր մը Խաչատուր Աբովեանի անուան մանկավարժական համալսարանին հետ, ըստ որուն Հալէպի քառամեայ դասընթացքը աւարտած իւրաքանչիւր ուսանող կրնար իր ուսումը շարունակել Հայաստանի Մանկավարժական համալսարանին մէջ:

2006-ի ամառը եկայ Հայաստան մասնակցելու «Սփիւռքահայ Ուսուցիչներու Վերապատ-

ռաստման դասընթացքներուն» ու դասընթացքի աւարտին արդէն որոշում կայացուցած էի օգտուիլ մեզի ընծեռնուած առիթէն եւ այս անգամ ուսումս շարունակել Երեւանի մէջ:

Թէ ի՞նչ տուաւ Խաչատուր Աբովեանի մանկավարժական համալսարանը ինծի:

Շատ պարզ կրնամ պատասխանել. ան երազանքս իրականութիւն դարձուց:

Երեւանի մէջ համալսարանական կրթութիւնը շարունակելու մեր որոշման մէջ մեծ դեռ խաղցաւ տիկին Ջուլիէթան: Ան մեծ քաջալերող մը եղաւ ինծի եւ ընկերուհիներուս: Հարազատ մօր պէս հոգ կը տանէր մեզի, որպէսզի երբեք օտար չզգայինք: Բայց ո՞վ կը ստիպեր մեզ օտար զգալ: Բոլորը բարեհամբոյր էինգ սկսած այն օրերու ռէքթորէն մինչեւ համալսարանի բոլոր պաշտօնեաներն ու դասախօսները: Յիշողութիւնս ինծի կը դաւաճանէ այս պահուն բոլորը մէկիկ-մէկիկ յիշելու: Բայց եւ այնպէս գիտեմ, որ բոլորը անխտիր կը փորձէին մեզի օգնութեան ձեռք մեկնել ու յարդել յառաջացած իւրաքանչիւր դժուարութիւն:

Մեծ յուզումով կը յիշեմ այն դասախօսները, որոնք լսարան մտնելով երբ կ'իմանային մեր սփիւռքահայ հայրենաւանդ ուսուցչուհիներ ըլլալը, այնպիսի խրախուսող եւ զգայաշունչ խօսքեր կ'արտասանէին՝ վեր առնելով սփիւռքի մէջ մեր տարած աշխատանքը, որ չյուզուիլ կարելի չէր: Քանի-քանի անգամներ պատկարելի դասախօսներ մեր ձեռքերը թօթուելով ըսած են, թէ ինչ կարելի է սորվեցնել սփիւռքի մէջ այդպիսի նուիրական աշխատանք տանող ուսուցիչին: Այս պահուս այս տողերը մտաբերելու եւ թուղթին յանձնելու ժամանակ իսկ կը յուզուիմ, երբ յիշեմ նման խրախուսական խօսքերը:

Եւ ահա առիթ ստեղծուեց չարտասանուած երախտիքի իմ խօսքս ուղղելու

➤5

ՆՐԱ ԵՐԱԶԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ.

ՍԱՄՎԵԼ ՊԻՊՈՅԱՆ



Բնության մեջ շատ են տարբեր տեսակի կենդանիները, որոնք շրջապատում են մարդուն և յուրահատուկ դարձնում մեր մոլորակը: Ոմանց համար նրանք հետաքրքիր են, ոմանց համար՝ փոքր-ինչ վախեցնող, բայց և կան մարդիկ, ովքեր ապրում են այդ ամենով: Նրանց ուրախություն է պարգևում ամեն մի նոր տեսակի հայտնաբերումը, թվաքանակի ավելացումը, առավել լավ ուսումնասիրումը, բայց և տխրեցնում է նրանց ոչնչացումը:

Այո՛, կան մարդիկ, ովքեր կենդանաբանությունն ընտրել են որպես իրենց կյանքի և սրտի մասնագիտություն և, կարելի է ասել, ապրում են այդ ամենով: Նրանցից մեկն էլ իր ուսանողների կողմից շատ սիրված և հարգված դասախոս Սամվել Պիպոյանն է. ով դեռ երեք տարեկանից վստահ էր իր մասնագիտության ընտրության հարցում, ուներ իր երազանքների մասնագետի մոդելը և մինչ օրս ձգտում է հասնել դրան՝ ամեն օր ավելի կատարելագործվելով և մեկ քայլ ևս առաջ շարժվելով:

Երազանքների իրագործման ճանապարհն սկսել է ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետում սովորելով, նաև այստեղ ավարտելով ասպիրանտուրան: Սակայն ԽՍՀՄ փլուզումից հետո, հակառակ իր մեծ ցանկության, աշխատատեղերի բացակայության պատճառով անմիջապես չի կարողացել աշխատել սիրելի մասնագիտությամբ: Առաջարկ ստանալով ՀՀ բարձրագույն կրթության և գիտության նախարարությունից՝ 1991 թվականից աշխատանքի է անցել միջին մասնագիտական կրթության վարչությունում, ուր աշխատել է շուրջ 20 տարի:

Հետագայում, վարչական աշխատանքին զուգահեռ, 1994 թվականին աշխատանքի է անցել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում (այժմ համալսարան): Առ այսօր նա աշխատում է սիրելի բուհում, իսկ վերջերս էլ ընտրվել է Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ:

Սամվել Պիպոյանին հաջողվել է կրթության ոլորտի երկու ասպարեզներում էլ լավագույններից մեկը լինել: Իսկ տարիների ընթացքում կարողացել է ստեղծել դասախոս լինելու իր բանաձևը՝ դա ապացուցելով ինչպես տեսականորեն, այնպես գործնականում: Ըստ նրա, դասախոսը պետք է ունենա անսահման սեր դեպի ուսանողը և իր առարկան: Բացի այդ, դասախոս լինելը չի ենթադրում միայն դասախոսություն կարդալ և դասն ավարտվելուն պես ցտեսություն ասել և հեռանալ: Դասախոսը պետք է կարողանա բացահայտել ուսանողի էությունը, բոլոր դեպքերում հաշվի առնի նրա կարծիքն ու ցանկությունները, ստեղծի փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտ:

Դե, իսկ իր ուսանողներն էլ ժամանակի ընթացքում կարողանում են վերլուծել լավագույն ուսանող լինելու բանաձևը, որն էլ ըստ Սամվել Պիպոյանի արտահայտվում է հետևյալ մոտեցումներում. առաջին հերթին ուսանողը պետք է գիտակցի, որ եկել է սովորելու, դասի ընթացքում նյութը յուրացնելու, դասախոսին հարցադրումներ ուղղելու, դասախոսին հնարավորություն տալու և օգնելու սեփական կարողությունների զարգացման գործում: Սամվել Պիպոյանի խորին համոզմամբ՝ լսարանում պետք է պահպանվի դասախոս-ուսանող սահմանը: Լսարանում բոլոր ուսանողներին պետք է հավասար վերաբերվել:

Իսկ ցանկացած ուսանող էլ իր հերթին պետք է կարողանա ըմբռնել լսածը, հարցերով խորացնել հասկացածը և սեփական աշխատասիրության շնորհիվ ստեղծել մնայուն գիտելիք:

«Իմ ուսանողները հիմնականում աղջիկներ են: Բայց չեմ հավանում այն ուսանողներին, ովքեր միայն արտաքնապես են գեղեցիկ: Արտաքին գեղեցկությունը սկսում է խամրել, երբ հոգին ու միտքը դատարկ են: Գեղեցիկ է այն աղջիկը կամ առհասարակ այն մարդն, ով արտաքին գեղեցկությունից զատ օժտված է հոգևոր և մտավոր գեղեցկությամբ: Հենց այդ երեք գեղեցկությունների համադրումից է ստեղծվում իրական գեղեցկությունը»,- գեղեցիկի մասին իր ընկալումներն է ներկայացնում մեզ սիրելի դասախոսը:

Առաջին հայացքից խիստ և պահանջկոտ, սուտն ատող այս մարդու մեջ շատ ավելին կա, քան տեսնում են շատերը: Նա օժտված է մի յուրահատուկ տաղանդով, որի շնորհիվ կարողանում է հավասարապես տեսնել բոլոր ուսանողների հետ կատարվող երևույթները, հետաքրքրվել ու փորձել օգնել հնարավորի սահմանում և անգամ իր փոքր, բայց կարևոր խորհուրդներով մեծ գաղափարներ արթնացել ուսանողների մեջ:

Մենք հասկանում ենք, որ լավագույն դասախոսները խիստ և պահանջկոտ են լինում, և որ, ինչպես մեր դասախոս Սամվել Պիպոյանն է ասում, գիտելիք տալու գործընթացում պետք չէ բարի լինել, այլ հնարավորինս խիստ և պահանջկոտ, բայց և անհրաժեշտ է հարգալից լինել ուսանողի նկատմամբ:

Նման դասախոսները քեզ սովորեցնում են մշտապես փնտրել ավելին, չբավարարվել իմացածով, ինքնակրթվել ու զբաղվել ինքնազարգացմամբ:

Երբեմն այդ ճանապարհը կարող է դժվար ու փշոտ թվալ, բայց միշտ պետք է հիշել, որ հաջողության հասնելու ճանապարհները երբեք հարթ չեն լինում, որ անընդհատ այդ ճանապարհն անցնելով ու ինչ-որ բան որոնելով, մի օր կհասնես ավելիին, քան փնտրում էիր… Եվ միայն այդ ժամանակ կարող ես մի պահ շրջվել ու թռուցիկ հայացք գցել անցած ճանապարհի վրա և ասել ամենակարևոր բառը՝ շնորհակալություն: Չէ՞ որ այդ մարդկանց շնորհիվ ենք տարիներ շարունակ կրթվում և գիտելիքի անսպառ սերմերը տարածում սերնդեսերունդ:

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ
Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի Լրատվական հանձնաժողովի ղեկավար

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ...

➢4 Խաչատուր Աբովեանի անուան մանկավարժական համալսարանի ղեկավարութեան, որ միշտ սփիւռքի կողքին է:

Հաւատացած եմ, որ Սփիւռքը առանց հայրենիքի չի կրնար գոյատեւել: Սփիւռքահայ գաղութները իրենց լայն հնարաւորութիւններով եւ կարողութիւններով կը գործեն յանուն մէկ նպատակի, սակայն անոնց գոյութեան ամէնէն մեծ գրաւականը հայրենիքի գոյութիւնն է:

Ցաւօք սրտի մայր գաղութը այսօր բռնած է նօսրացման ճամբան: Տասնեակ հայկական դպրոցներ, ակումբներ ու եկեղեցիներով լեցուն քաղաքին մէջ հայութեան թիւը նուազած է: Նախքան պատերազմը հալէպահայութեան մտահոգութիւններու ծիրէն ներս չէր մտներ երբեք ծուլումը: Բոլոր հայ երեխաները կը յաճախէին հայկական վարժարաններ, օտար ամուսնութիւնները հազուագիւտ երեւոյթ էին: Թէ ինչ կ'ըլլայ վաղուան պատկերը: Այսօր կանխատեսելը կարելի չէ: Բայց, որպէս գաղութի մշակութային կեանքի մէջ համեստ մասնակցութիւն բերած մարդ եւ որպէս հայրենաւանդ ուսուցչուհի կը կարծեմ, որ այսօր առաւել եւս կարեւոր է զգաստանալը: Մեր գաղութի ղեկավարներէն կը պահանջուի նոր ռազմավարութիւն՝ կանխելու համար ամէն տեսակի ծուլման վտանգ: Իսկ ինչ պարտականութիւն ունի հայ ուսուցիչը:

Հայ ուսուցիչին ուսերուն ծանրացած է այս պարտականութիւնը: Որքան ալ կրկնենք ու կրկնենք, թէ ընտանիք, եկեղեցի, ակումբ մէկ օղակ են: Բայց եւ այնպէս ամէնէն մեծ պարտականութիւնը ինկած է հայրեւանաւանդ ուսուցիչին ուսերուն:

Քիչիկ մը թոյլնալը կրնայ կործանիչ դառնալ: Մեր հոգատարութեան յանձնուած տասնեակ մը հայ աշակերտները, որոնք վերջին այս տասնամեակին ապրեցան ոչ միայն պատերազմի արհաւիրքը, այլ նաեւ համտեսեցին տնտեսական ծանր պայմանները, որոնք շատ անգամ կորսնցուցին կեանքի հանդէպ իրենց լաւատեսութիւնն ու մանկական անմեղութիւնը, ու դեռ անոնց ուսերուն վրայ ծանրացած են պետական ուսումնական ծրագիրները, ինչպէս կարելի է տակաւին քարոզել սէր դէպի մայրենի լեզուն, դէպի իրենց ազգային ինքնութիւնը: Անաղարտ հայերէն լեզուի պահպանումը եւ ազգային գիտակցութեան սերմանումը կը մնայ հայ ուսուցիչին միակ եւ սուրբ պարտականութիւնը: Ուստի այսօր առաւել քան երէկ հարկաւոր են Մանկավարժական համալսարանի հոգեբանական եւ մանկավարժական նոր մեթոտներու ստացած մեր գիտելիքները կարենալու համար շարունակել մեր նուիրական աշխատանքը:

Երան ԶԷՅԹՈՒՆՑԵԱՆ
ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ, Հալեպ (Սիրիա)

ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԵՏՐՈՒՄ...

Մանկավարժական համալսարանն ուսանողի արյան և էության մեջ ամրագրում է Մեծն լուսավորիչ Խաչատուր Աբովյանի պատգամը. «Ունկնդիր լինել դարերի կանչին»:

Ես Մարիամ Ժամհարյանն եմ, սովորել եմ ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետում: Ունենալով բավականին հագեցած ու բուռն ուսանողական տարիներ՝ այսօր արդեն հաջողությամբ փակում եմ նաև կյանքիս այդ էջը:

Իմ ընտրած մասնագիտությունն ունի անհուն ակունքներ, որոնց խորքերում բազում հետաքրքիր գանձեր կան պահված: Օրինակ՝ պարը մարմնի և հոգու ներդաշնակությունն է, իսկ բանասիրությունը՝ բառերի միաձուլումից ստեղծված բազմախորհուրդ սիմֆոնիա, որտեղ ամեն բառ, միտք, կապակցություն դառնում է մի յուրօրինակ մեղեդի, որի ելևէջները կարող են ներթափանցել ընթերցողի ոգու խորքերը՝ տանելով նրան անծայրածիր աշխարհ, որտեղ թագավորում է գիտելիքն իր անսահման հնարավորություններով:

Իմ ավարտական շրջանը համընկավ հայտնի համավարակի տարածման հետ, ուստի այն բավականին տարբեր ու արտասովոր ստացվեց: Ի դեպ, վարակն ինձ ևս չշրջանցեց: Իմ հիվանդության ընթացքը համընկնում էր համալսարանում անցկացվող միջանկյալ քննությունների հետ, որը հայտնի պատճառներով անցկացվում էր հեռավար: Մի կողմից՝ հիվանդությունն իր հետևանքներով, մյուս կողմից՝ պատասխանատու քննական շրջանն իմ կյանքը դարձրել էին փոթորիկ, որի ուժգնությանը դիմանալու համար անհրաժեշտ էր մարդկային ջերմ վերաբերմունք, ինչու չէ, նաև հոգեբանական ճշգրիտ մոտեցում: Ինձ հաճախ թվում էր, որ ես անկարող եմ դուրս գալ ստեղծված իրավիճակից և մասնակցել բոլոր քննություններին և հասնել այն բաղձալի օրվան, որին այդքա՜ն երկար էի սպասել: Աջակցությունը չուշացավ. ինձ օգնության ձեռք մեկնեցին և ստեղծված իրավիճակից հանեցին իմ սիրելի համալսարանի բանիմաց, գրագետ, իրենց գործին գիտակ դասախոսները, ովքեր դասախոս լինելուց զատ Մարդ են՝ բառի լայն և իսկական իմաստով, մարդ՝ օժտված մարդկային ամենավեհ զգացումներով, ովքեր ի զորու եղան վերափոխել իմ կյանքը, քանի որ ակամա հայտնվել էի երկու խաչմերուկների բախման կետում՝ հիվանդություն և կրթություն: Դասախոսների շնորհիվ ես հաղթահարեցի վախերս, ուժ գտա իմ մեջ և մասնակցեցի քննություններին, որոնք անցան բավականին բարեհաջող:

Քննաշրջանի ընթացը հաղթահարվեց «Classroom» հարթակի միջոցով, որը բավականին հարմար է հեռավար ուսուցում կազմակերպելու համար: Ուսուցման այս ձևը մի ինքնատիպ լուծում է, երբ մարդն ակամա բախվում է անսպասելի որևէ խնդրի, ինչպիսին էր Հայաստանում և ողջ աշխարհում առաջ եկած հայտնի թագավարակը, որը հանկարծակիի բերեց բոլոր ոլորտների աշխատողներին, հատկապես կրթության պատասխանատուներին: Բայց մեր համալսարանը կարողացավ շատ կարճ ժամանակամիջոցում գտնել ճիշտ լուծումներ, իրականացնել իր առաջ դրված խնդիրներն ու պահանջները:

Յուրաքանչյուր գրագետ մարդ պարտական է իր ուսուցչին, իսկ ես պարտական եմ ՀՊՄՀ ողջ պրոֆեսորադասախոսական անձնակազմին, որ կյանքիս դժվարին պահին եղան իմ կողքին՝ աջակցելով մարդկայնորեն և մասնագիտորեն: Խոսքս ավարտեմ մեկ, բայց տարողունակ բառով՝ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ:

Սեպտեմբերին առավել վստահ ես կվարեմ իմ դասերը, բարության ու մարդասիրության դասերը, որոնք ինձ փոխանցել են Բանասիրական ֆակուլտետի իմ դասախոսները:

Մարիամ ԺԱՄՀԱՐՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ, Վարդենիսի № 3 հիմնական դպրոցի ուսուցչուհի

ԹԵՐԹԵԼՈՎ ԱՆՑՅԱԼԻ ԷՋԵՐԸ

Աշոտ ԱԲՐՀԱՄՅԱՆ

Լեզվաբան, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, մանկավարժ Աշոտ Աբրահամյանը ծնվել է 1918 թ. Շահրիզ (այժմ՝ Գեղարքունիքի մարզի Գեղամավան) գյուղում: 1937 թվականից աշխատել է որպես ուսուցիչ Հրազդանի շրջանի դպրոցներում, վարել նաև ուսմասվարի և տնօրենի պաշտոններ:

Բարձրագույն կրթությունն ստացել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնում: 1948 թվականին պաշտպանել է ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան, 1943 թվականից մինչև մահը դասախոսել է նույն ինստիտուտում: 1950-1959 թվականներին պաշտոնավարել է ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում իբրև բաժնի վարիչ, 1960 թվականից Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի վարիչն էր:

1963 թվականին նա պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: Վարել է ժամանակակից հայոց լեզու, գրաբար, լեզվաբանության ներածություն բուհական դասընթացները: Ուշագրավ ներդրում ունի հայերենի, մասնավորապես արդի գրական լեզվի բայակազմության, բայական կարգերի ձևաբանական հատկությունների քննության բնագավառում: Գրաբարի նրա կազմած ձեռնարկը ակնհայտորեն նպաստել է հին գրական հայերենի ուսուցման գործին: Հանդես է եկել բազմաթիվ արժեքավոր հոդվածներով, որոնց մեջ անդրադարձել է հայերենի պատմական հնչյունաբանության, բառաքննության խնդիրներին, լեզվի ավանդման գիտամեթոդական խնդիրներին և այլն:

Աշոտ Աբրահամյանի մեծագույն ծառայությունը հայագիտությանը եղել և մնում է հայ միջնադարի երկու մեծարժեք մատյանների աշխարհաբար թարգմանությունը. 1971 թվականին լույս տեսած Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» և Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությունը»:

Աշոտ Աբրահամյանը մահացել է 1985 թ. Երևանում:

ՀՊՄՀ գիտական թանգարան

ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԱՐՇԱՎ ԴԵՊԻ ԽՈՒՍՏՈՒՓ

Մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետում գործող «ՀԱՐՅՈՒՐ ԼԵՌՆԱԳԱԳԱԹ» լեռնագնացների ակումբի հերթական նպատակակետը լեգենդ լեռն էր՝ Խուստուփը (3201 մ): Հունիսի 28-ի վաղ առավոտյան ակումբի 7 անդամներ, չնայած անձրևին և մառախուղին, Խուստուփի ժայռոտ գագաթին էին. ակումբի 7-ամյակին 7 անդամներով Խուստուփի բարձրանալը խորհրդանշական էր:

Հայտնի է, որ 1919-1921 թթ. մեծանուն Գարեգին Նժդեհը Սյունիքում թաթարների և բոլշևիկների դեմ պայքարում հաճախ էր ապավինում Խուստուփի անմատչելի լանջերին ու ծերպերին: Խուստուփ-Գարեգին Նժդեհ հսկաների «հանդիպման» մասին բոլորը գիտեն:

Խուստուփը համարվում է սուրբ լեռ: Իզուր չէ ժողովուրդը նրան տվել «ճգնավոր» անունը: Լեռան անվան ստուգաբանություններից մեկի համաձայն՝ նրա հիմքում ընկած է խուռիերեն «խութու» արմատը, որը նշանակում է աղոթք: Դեռ հին ժամանակներից լեռը եղել է աղոթատեղի և ուխտագնացության վայր:

Խուստուփի լանջին՝ Կոզնի կոչված աղբյուրի մոտ են ամփոփված հայ ժողովրդի զորավար Գարեգին Նժդեհի մասունքները:

ՎԵՐԱՀԻՄԱՍՏԱՎՈՐԵԼՈՎ ԿՅԱՆՔՍ...

Երբեմն կյանքում տեղի են ունենում այնպիսի իրադարձություններ, որոնք կարող են վերահիմաստավորել կյանքդ: Դա կարող է լինել ինչ-որ հիվանդություն, լավ ու վատ անակնկալներ: Իմ դեպքում՝ իմ երեխաներն էին, որոնք ստիպեցին ինձ աշխարհին և կյանքին նայել բոլորովին ուրիշ աչքերով: Այն փոփոխությունը, որը կատարվեց իմ կյանքում, անսպասելի էր բոլորի համար: Չնայած նրան, որ իմ մայրիկն ու քույրիկը մանկավարժներ էին, ես երբեք չեմ ձգտել դառնալ ուսուցիչ: Դպրոցական տարիներին շատ եմ սիրել մաթեմատիկական հաշվարկներն ու բնագիտական առարկաները: Դպրոցն ավարտելուց հետո աշխատել եմ տարբեր բնագավառներում, շփվել եմ տարբեր մարդկանց հետ: Քսան տարի անց երրորդ երեխայիս՝ տղայիս ծնվելուց հետո հասկացա որ հոգով և իմ ամբողջ էությամբ մանկավարժ եմ, և որ հետագայում ուզում եմ աշխատել դպրոցում՝ երեխաների հետ:

Քանի որ դպրոցական կյանքն ու դաստիարակչական աշխատանքն ավելի ու ավելի էին ինձ հետաքրքրում, քառասուն տարեկանում որոշեցի փոխել մասնագիտությունս, վերահիմաստավորել կյանքս:

Դա շատ անսպասելի որոշում էր, անակնկալ ոչ միայն ընտանիքիս անդամների, այլև շրջապատիս համար: Անչափ զարմացան իմ կոլեգաները, որոնց հետ աշխատել էի երկար տարիներ: Իսկ մայրիկս ու քույրիկս ըմբռնումով մոտեցան իմ որոշմանը, բայց զգուշացրին, որ մանկավարժ լինելն այնքան էլ հեշտ գործ չի: Շատերն են ձգտում դառնալ ուսուցիչ, բայց բոլորը չէ, որ կարող են լինել մանկավարժ:

Վերափոխելով կյանքը՝ մարդն ուրիշ հայացքով է նայում աշխարհին, երևույթներին: Իմ դեպքում էլ էր այդպես:

Ես նկատեցի, որ արդեն փոխվել եմ, երբ մտա դպրոց (հրավիրված էի ծնողական ժողովի): Դեռ մի քանի տարի առաջ ես շատ անտարբեր հայացքով էի նայում այն ամեն ինչին, ինչ կատարվում էր դպրոցում: Երեխաները և դպրոցական կյանքն ինձ բոլորովին չէին հետաքրքրում, բայց հիմա, երբ ես որոշեցի փոխել մասնագիտությունս, բոլորովին այլ հայացքով եմ նայում երեխաներին և դպրոցական կյանքին. փորձում եմ ինքս ինձ բացատրել նրանց պահվածքը, մտածելակերպը, հոգեբանությունը...

Կարծես ավելի ու ավելի եմ խորանում նրանց կյանքի ու մտածելակերպի մեջ, փորձում եմ երեխաներին նայել ոչ միայն ծնողի, այլև մանկավարժի և հոգեբանի աչքերով: Ուզում եմ ավելի լավ հասկանալ նրանց բոլոր իրավիճակներում:

Փոխելով մասնագիտությունս և վերահիմաստավորելով կյանքս՝ ես ինձ ավելի երիտասարդ զգացի, նաև՝ երջանիկ, որովհետև հասկացա, որ մանկավարժությունն ավելի հոգեհարազատ է ինձ, քան իմ նախկին մասնագիտությունը, քանի որ հիմա ինձ դուր է գալիս դասավանդել, դաստիարակել և փոխանցել իմ գիտելիքները: Անչափ կարևոր է ուշադրություն դարձնել երեխաների գեղագիտական զարգացմանը:

Գեղարվեստական դաստիարակությունն օգնում է երեխային՝ զարգացնել միտքը, երևակայությունը, ավելի լավ հասկանալ աշխարհն ու շրջապատի մարդկանց ես ինքս էլ սիրում եմ ազատ ժամերին նկարել, հատկապես ամռանը, երբ ապրում եմ իմ ամառանոցում և գտնվում եմ բնության գրկում: Կյանքը գեղեցիկ է և երբեք ուշ չէ այն նոր շրջադարձ մտցնել, նոր հետաքրքրություններ գտնել, անսպասելի փոփոխություններ մտցնել կյանքիդ մեջ:

Իրինա ԹԱՐԽԱՆՅԱՆ
Սկզբնական կրթության ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի հեռակա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի ուսանողուհի

ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ

3. Եւ Աստուած ասաց. «Թող լոյս լինի»: Եւ լոյս եղաւ:
4. Աստուծ տեսաւ, որ լոյսը լաւ է, եւ լոյսը բաժանեց խաւարից:
Ծննդոց

Այս պատմությունն ինձ հետ պատահեց 1993 թվականին: Մութ ու ցուրտ, բարի օրերն էին: Երբ այժմ գնում ենք Երևանից դուրս պեղումների, պատահում է, որ երբեմն-երբեմն այն տանը, որում արշավախմբով մնում ենք, լույսը կես կամ մեկ ժամով անջատում են: Արտասահմանցի գործընկերներիս համար դա սթրես է, իսկ ինձ համար հիշողություն և ուղևորություն դեպի անլույս, բայց այնքան ջերմ ու լուսավոր օրերը:

Երևանում լույսը միացնում էին գրաֆիկով, որքան հիշում եմ՝ երկու ժամ ցերեկը, երկու ժամ էլ գիշերը: Ու դա մարդամոտության ու լույսի ավետման տոնն էր: «Լույսե՛ր տվեցին, լույսե՛ր տվեցին»,- բակերում գոռում էին իմ հասակակիցները: Մարդիկ մարդու նման շտապում էին կիսվել. լույսով, ուրախությամբ, հոգսերով ու նորից լույսով...

Տատիկիս տունը գտնվում է Խանջյան 49 հասցեում: Հաճախ էի սիրում նայել երրորդ հարկի բնակարանի պատշգամբից բացվող Երևանին: Հատկապես՝ ամառները: Դիմացի մայթով տրամվայներն էին գնում, իսկ հետևում Գետառն էր, շատ թե քիչ վարարած, ճամփա բռնել: Թենիսի կորտերում երկու գեղատեսիլ աղջիկ միշտ այդ ժամին թենիս էին խաղում: Թեև տարածությունը բավական հեռու էր, բայց անհնար էր չնկատել նրանցից մեկի հյուսկեն մազերն ու հեքիաթային ժպիտը: Նրա ամեն մի հարվածը գնդակին ներդաշնակվում էր քիչ այն կողմ քամուց սեթևեթող կանաչ բարդիների հետ:

Կորտերից անդին Երևանի պետական համալսարանն էր: Տրամվայի սուլոցը, թենիսի գնդակի ձայնն ու Գետառի բարբառող ջուրը, որից Երևանի հոտն էի շնչում: Քիչ ուշադիր լսիր, և Գետառի ամեն մի կարկաչյուն երևանյան խոսվածքով քեզ զարմանալի ու հետաքրքիր պատմություններ կավետի մեր հնամենի մայրաքաղաքի մասին: Հայրս պատմում էր, որ հին ու բարի ժամանակներում Գետառը վարարում էր, դուրս գալիս հունից ու հասնում մինչև իրենց շենք: Մոտակա շենքերի պատանիները քարերով «գյոլ» էին կապում ու լողանում: Հորս համար Գետառի մասին այս պատմություններն արդեն դարձել են դրվագ ու հիշողություն: Ով իմանար, որ իմ Գետառն էլ, տրամվայներն էլ ինձ համար նույնպես դրվագ ու հիշողություն կդառնան: Հիմա արդեն Գետառից լսվող ջրից ինչ-որ անծանոթ բառեր են հնչում:

Տատիկիս տանն այդ օրը, սակայն, ամառ չէր: Խստաշունչ ձմեռ: Վառվում էր լամպի պատրույգը: Նստած էինք սենյակում տատիկս, երկու հորաքույրս և ես: Չուգունի վառարանն իր կայծկլտացող-այրվող փայտերի խորհրդավորությամբ դարձել էր մեր զրույցների վկան: Չգիտեմ ինչու՝ այդ պահին ես լույս ուզեցի: Բայց Գրողի տարած լույսը չկար: Արդեն գրաֆիկով գիշերը մեր շենքին հասանելիք լույսը տվել էին: Այո՛, այո՛, Գրողի տարած լույսը: Հայկական բանահյուսության մեջ Գրողը մարդակերպ ոգի է, հոգեհան կամ հոգեառ: Հենց կանխորոշված օրը Գրողը ներկայանում է մարդուն և իր զենքերով հարվածում ու առնում նրա հոգին: Մահը հաճախ պատկերացել է հենց կռիվ Գրողի հետ: Լույսն էլ կռիվ է տալիս խավարի հետ:

Երևի գիշերվա ժամը տասն էր: Վեր կացա տեղիցս, նայեցի տատիս, հորաքույրերիս ու ասացի.

- Ես լույս եմ ուզում: Ինձ լույս ա պետք:

- Բալա ջան, էսօր լույսն արդեն տվել են, էլ չի լինի,- ասաց տատս,- հեսա կքնես, առավոտը կգա, լույսը կբացվի:

- Չէ, ես հենց հիմա լույս եմ ուզում: Տվեք ինձ էլեկտրացանցի համարը, որը մեզ լույս ա տալիս:

Տատս ու հորաքույրերս սկզբից ժպտացին, բայց ես ավելի համառ էի, ու ստիպված էին տալ էլեկտրացանցի համարը: Գնացի, նստեցի հեռախոսի մոտ գտնվող աթոռին ու ցուցամատս խցկելով հեռախոսի թվերով շրջանակների մեջ՝ զանգեցի էլեկտրացանց: Մի տղամարդ լսափողը վերցրեց:

- Բարև, ձյածյա ջան: Ես լույս եմ ուզում: Շատ եմ խնդրում, ինձ լույս տվեք: Շատ եմ խնդրում, ձյածյա ջան, ինձ լույս ա պետք:

- Բալիկ ջան, ձեր շենքի համարը ո՞րն ա:

Անմիջապես հորաքրոջիցս հարցրի:

- Խանջյան 49, ձյածյա ջան:

Ձյածյան մի պահ լռեց, հետո պատասխանեց.

- Ախր, բալիկ ջան, էսօր արդեն ձեր շենքի լույսը տվել ենք:

- Չէ, ձյածյա ջան, ես լույս եմ ուզում: Խնդրում եմ, ձյածյա ջան, ինձ լույս ա պետք, շատ եմ խնդրում...

Լսափողը դրեցի: Անցավ հինգ րոպե: Ու լույսը վառվեց: Լույսե՛ր տվեցին: Տատս, հորաքույրերս խառնված ժպիտով ինձ էին նայում: Հարևանների դռներն են բացվում: Մեր դուռը թակում են: Կողքի հարևան Ալո տատին էր:

- Էս ի՞նչ ա էղել, տեսնո՞ւմ եք, լույսերը տվել են: Էս կարող ա՞ ուրիշ շենքի լույսը շփոթել են, մեզ են տվել: Ամբողջ մուտքում իրարանցում էր: Չսպասված տոն: Բոլորն ուրախ՝ իրար լույս էին ավետում:

Այդ օրը Խանջյան 49 շենքը հավելյալ երկու ժամ լույս ունեցավ: Էմմա հորաքույրս ժպտալով նայեց ինձ ու ասաց.

- Էսօր դու մեր ամբողջ շենքին լույս տվեցիր:

Երբ Երևանից դուրս գնում ենք հնագիտական պեղումների, ու երբեմն-երբեմն կես կամ մեկ ժամով մեր վարձակալած տան լույսն անջատում են, արտասահմանցի գործընկերներս սթրես են ապրում: Իսկ ես ժպտալով հիշում եմ քեզ: Թեև երբեք չեմ տեսել, բայց հիշում եմ քո պայծառ դեմքը, հայկական բեղերով խառնված բարի ժպիտը և լույսը, որ ինձ տվեցիր...

Միքայել ԲԱԴԱԼՅԱՆ
Էրեբունի արգելոցթանգարանի տնօրեն, ՀՊՄՄՀ շրջանավարտ

Թագավարակի ուրվականը

Կորոնան այնքան է հարազատացել, որ նրա ուրվականը հայտնվում է անկողնուս մեջ, երբ բացում եմ աչքերս, նստում է դիմացս, նայում է սուրճիս բաժակին, էլ չեմ ասում, որ կրնկակոխ հետևում է ինձ, զննում, թե շա՞տ եմ վախենում իրենից: Երբ ավարտվում է օրը, գալիս է, պառկում մահճակալիս՝ որպես տիրոջը չլքող հավատարիմ շնիկ: Ուզած թե չուզած՝ շոյում եմ գլուխը, որ չաղմկի:

Չգիտեմ, թե ինչ է կարդում հայացքիս մեջ, բայց ես ունեմ մի հստակ տեսակետ, որ սատանան այնքան էլ ահավոր չէ, ինչպես պատկերացնում ենք: Ես ճանաչում եմ նրան դեռ իմ ջահելության տարիներից: Ինձ գտնում էր, ուր էլ լինեի:

Կորոնան քամելեոն է նաև: Ամեն օր փոխում է իր գույնը: Բոլորից շատ վախ է ներշնչում, երբ խառնվում է սևի ու սպիտակի հետ, քաղաքականացվում է և դառնում գորշագույն, անընդունելի կոկտեյլ՝ իմ չսիրած ծավալումներով:

Պոետի համար մնում է ինքնախոստովանանքի դատավճիռ: Եվ այդ հռչակումից հետո կա՛մ ազատ ես արձակվում, դուռն ու պատուհանը բաց ես թողնում փախուստի համար, կա՛մ հայտնվում ես տան պատերի բանտի մեջ՝ քո իսկ հորինած ինքնակամ աքսորում:

Իսկ դրսում մխիթարություն չէ, դիմակը խանգարում է: Առաջին անգամ զգում ես թթվածնի գերիշխանությունը, կախվածությունը նրանից: Աշխատում ես տեղ-տեղ ազատվել այդ աչքակապ հիշեցնող բազմատեսակ դիմակներից:

Չէ՛, արդեն միակ սփոփանքն է՝ նայել առաստաղին և մտովի ետ տանել երկնքի ու տան միջև եղած այդ բետոնե ծածկույթը:

Կորոնան հաճախ, որպես երևույթ, ինձ խաղ է թվում՝ մեծ տերությունների սցենարով գրված, և բեմը դառնում է քառասային ու խուճապաստեղծ, անկառավարելիություն՝ փոքր երկրների համար: Աշխարհի քարտեզն այսօր դառնում է էլաստիկ ու ձգողական, որտեղ ամեն մի դերակատար ուզում է իմաստուն և ազդեցիկ երևալ, տեղավորվել իր իսկ հյուսած որոգայթի մեջ:

Է՜, տեսնես առանց կորոնայի կկարողանա՞նք ապրել հետայսու, երբ ընտելանալու ուժը այլևս վախ չի ներշնչի: Անգամ թշնամի հարևանիդ հետ կարողանում ես ապրել՝ զգուշության փայտը միշտ պահած դռան ետևում:

Ի՞նչ ասեմ այդ թագավարակի մասին, որ ոտնատակ է լինելու շուտով: Տարիների հեռավորությունից նայելիս պիտի կուչ գա որբացած, բորոտ ու հիվանդ մի ծերուկի պես, որ օգնություն է աղերսում աչքերով:

Մնում է բարձրագոչել.

Դու էլ հավերժական չես, սքեմավո՛ր:

Շուտով կապրենք առանց քեզ:

Իսկ ես մի տրագիկ պատմություն կգրեմ նրանց թուլության մասին, ովքեր վախի դրոշ են ճոճել և փորձել են համոզել ինձ, որ իրենք գերհզոր են:

Կգա՛ այդ ժամանակը:

Հռիփսիմե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԸՆԿԵՐՈՋՍ ՄԻՏՔԸ

Քաղաքի մութ ու փոշոտ փողոցներով քայլում էինք լուռ ու մտազբաղ... Ընկերս էր: Երկուսս էլ լուռ էինք, սակայն այնքան բան կար ասելու՝ սրտից, հոգուց... Երկուսս էլ մտածում էինք, մտածում... Իմ միտքը թռել էր դեպի «անիրական հեռուները», իսկ նրանը՝ տեղում էր, մեզ հետ...

Ես՝ նրա ընկերը, սովորություն ունեմ մտածելու անցյալի ու ապագայի մասին... Իսկ նա շրջապատված է ներկայով... Ընկերոջս միտքը շատ անգամ է օգնել ինձ՝ հասկանալու իրեն, գուցե նաև ինձ...

Ընկերոջ միտքը... ինչքան պարզ է այն, ինչքան ճիշտ. այն խոսում ու լռում է ճիշտ ժամանակին: Շարունակ քայլում էինք ու չէինք էլ նկատում, որ մութն արդեն ընկնում է, ու մեզ պատել է մթնշաղը: Քաղաքի լույսերն արդեն վառվել էին, մարդիկ շփոթահար վազում էին կանգառում կանգնող ավտոբուսների հետևից. բոլորը տուն էին շտապում... Զարմանալի էր, որ նույնիսկ փչող քամին ու սառը օդը մեզ չէին սթափեցնում... Մենք, խորասուզված մեր հոգին տագնապեցնող մտքերում, քայլում էինք՝ կտրված աշխարհից...

Քայլում էի ու մտածում ընկերոջս մասին. ո՞ւր էր նրա միտքը հիմա... չէ՞ որ արդեն մութ էր, չափչփել էինք փողոցները: Մի պահ զգացի, որ կտրվել էր իրականությունից. այնքան էր տարվել սեփական մտքերով, որ չէր նկատում ոչ ոքի ու ոչինչ:

Ձայն տվեցի. չլսեց: Ձեռքից բռնեցի՝ ասելով. «Սպասի՛ր...»: Կանգնեց... զարմացած ու սառած հայացքն ուղղեց ինձ. չէր գիտակցում, թե ի՛նչ է կատարվում շուրջբոլորը: Հայացքը մի պահ շեղեց... հետո նորից նայեց ինձ՝ ասելով «Գնա՞նք»: Ի՞նչ ասեի ես... գլխով համաձայնության նշան տվեցի: Նորից քայլեցինք... դեպի ո՞ր կողմ, դեպի ո՞ւր... ինքս էլ չգիտեմ...

Բավականին ուշ էր արդեն, երբ բաժանվեցինք... Հրաժեշտ տվեցինք, ու ես հեռացա՝ թողնելով նրան ինքն իր հետ՝ իր մտքերի հետ առանձին...

Ընկերոջս միտքը... որտե՞ղ է այն հիմա. քաղաքի ո՞ր փողոցում, ո՞ր մայթին...

Անի ՄԱՐԳԱՐՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, հեռակա, 3-րդ կուրս

«Դու իմ երազանքներին տվեցիր ձև և վերադարձրիր թևեր»

Իմ ներածական խոսքը որոշեցի սկսել թևավոր արտահայտությամբ. «Տվեք ինձ հենման կետ, և ես կշրջեմ Երկիրը» (Արքիմեդ), որովհետև իմ համալսարանը (ես հպարտությամբ եմ ասում իմ) տվել և տալիս է ինձ ինքնադրսևորման համար անհրաժեշտ երաշխիքներ, ինքնակատարելագործման և ինքնազարգացման անվերջ հնարավորությունների աղբյուր է:

Այս կարճ հինգ տարիները, որ ես անցկացրել եմ համալսարանի պատերի ներսում, նշանավորվեցին բազմաթիվ փորձառություններով, ձեռքբերումներով և հաղթանակներով: Իմ առջև բազմաթիվ դռներ բացվեցին. ես ծանոթացա շատ մարդկանց հետ, ովքեր իրենց մասնագիտության վարպետներն են: Ինչպես աստղագետն է բացահայտում նոր համաստեղություն, այնպես էլ ես հայտնաբերեցի մի նոր աշխարհ, մի աշխարհ, որտեղ ես ճանաչեցի անսահման գեղեցիկ լեզվաբանությունն իր ամբողջ խորությամբ, բնականաբար, շնորհիվ համալսարանի և նրա մասնագիտական անձնակազմի: Ձեռք բերեցի հիանալի ընկերներ՝ համակուրսեցիներիս, որոնց հետ ապրել եմ բազմաթիվ երջանիկ պահեր:

Իմ գիտական ղեկավարը՝ Լևոն Երվանդի Մարկոսյանը, մի անգամ ասաց. «Համալսարանը գիտության տաճար է»: Այս խոսքերը միշտ կհիշեմ, քանի որ դրանցում արտացոլված է մանկավարժական ողջ գաղափարախոսությունը:

Շնորհիվ այնպիսի վարպետների, ինչպիսիք են Նաիրա Դալյանը, Լևոն Մարկոսյանը, Իրինա Մանուկյանը և շատ ուրիշներ, ես հասկացա, որ գտել եմ ինձ այս ոլորտում, որ լեզվաբանությունը իմ ապագա մասնագիտությունն է, իսկ Ռուզան Թադևոսյանի, Ինն Սարկիսյանի, Անահիտ Ամիրխանյանի և այլոց շնորհիվ ես սիրեցի գրականությունը. հասկացա նրա ողջ խորությունը, անասելի կախարդանքը:

Առաջին կուրսում, Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան այցելության ժամանակ, կարծիքների և տպավորությունների գրքում ես գրեցի հետևյալ տողերը. «Դու իմ երազանքներին տվեցիր ձև և վերադարձրիր թևեր»:

Մանկավարժությունը մասնագիտություն չէ, առաքելություն է: Դա ամենապատասխանատու առաքելություններից մեկն է, որը միայն կարելի է պատկերացնել:

Հիշենք Հիսուս Քրիստոսին, որն իր ուղերձները բանավոր քարոզելով՝ հիշատակվեց որպես «ռաբբի»՝ ուսուցիչ:

Մեծ հույսեր եմ կապում հարազատ դարձած ՀՊՄՀ-ի հետ և, իհարկե, կշարունակեմ սովորել արդեն մագիստրատուրայում: Մանկավարժական համալսարանը մասնագիտական դարբնոց է, մեկ տեղում կենտրոնացած մեծ լեզվաբանների ու տարբեր մասնագետների կաճառ:

Կորյուն ՕՀԱՆՅԱՆ
Օտար լեզուների ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժնի հեռակա ուսուցման համակարգի 2019-2020 թթ. շրջանավարտ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ



Լույս է տեսել Մանկավարժական համալսարանի «Հայագիտական հանդես» պարբերականի 2020 թվականի 1(46) համարը:

Պարբերականի «Լեզվաբանություն» (4 հոդված), «Գրականագիտություն» (5 հոդված), «Պատմություն» (1), «Մշակույթ» (5 հոդված), «Մանկավարժություն և մեթոդիկա» (2 հոդված) բաժիններում ներկայացվել է 17 հոդված:

Հանդեսի հերթական համարում տեղ գտած գիտական տարաբնույթ հոդվածներն անչափ ուշագրավ ու հետաքրքիր նորություններ են պարունակում:

«Ուզում եմ իմանալ ավելին»

Հուլիսի 8-ին մեկնարկեց Բժշկագիտության և առողջապահության ամառային դպրոցի «Ուզում եմ իմանալ ավելին» առցանց առաջին հանդիպումը՝ կազմակերպված ՀՊՄՀ Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ամբիոնի կողմից: Առցանց հանդիպմանը մասնակցում էին Մանկավարժական համալսարանի տարբեր ֆակուլտետների ուսանողներ ու դասախոսներ, բժիշկներ և հյուրեր:

Հանդիպումը նվիրված էր Կովիդ-19 համավարակի ժամանակակից պատկերացումների քննարկմանը: Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ., ընտանեկան բժիշկ, թոքաբան Աննա Մարգարյանը ներկայացրեց Կովիդ-19 հիվանդության ժամանակակից պատկերացումները՝ շեշտադրելով կլինիկական ընթացքն ու կանխարգելման սկզբունքները: Մեկնաբանվեց նաև ուսանողների շրջանում անցկացված Կովիդ-19-ի վերաբերյալ գիտելիքների և վարքագծի ուսումնասիրման ստացված արդյունքները:



Ձեկույցով հանդես եկավ նաև հրավիրված դասախոս, մանկաբույժ, երեխաների շնչառական առողջության պահպանման Առողջապահական ՀԿ նախագահ Սաթենիկ Հարությունյանը, որն անդրադարձավ նոր կորոնավիրուսային վարակի առանձնահատկություններին երեխաների շրջանում: Մասնագետը շեշտեց երեխաների տարբեր տարիքային խմբերում այս հիվանդության վաղ ախտանիշների ճանաչման կարևորությունը, գործնական աշխատանքից բերեց կլինիկական օրինակներ:

Ուսանողներն ու դասախոսները մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին ներկայացված թեմայի հանդեպ և շնորհակալություն հայտնեցին ինչպես բանախոսներին, այնպես էլ միջոցառման կազմակերպիչներին:

Բժշկագիտության և առողջապահության ամառային դպրոցի «Ուզում եմ իմանալ ավելին» հանդիպումները շարունակական կլինեն, հաջորդ հանդիպումը կկազմակերպի հուլիսի 15-ին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը հայտարարում է 2020/2021 ուսումնական տարվա հայցորդական (հետբուհական) կրթության ընդունելություն (վճարովի հիմունքներով)

Հայցորդական (հետբուհական) կրթության ընդունելության մրցույթին կարող են մասնակցել պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի շրջանավարտներ, ովքեր ունեն մագիստրոսի կամ բարձրագույն կրթությամբ մասնագետի դիպլոմ:

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում համալսարանի ռեկտորին՝ նշելով ընտրած մասնագիտությունը:
2. Մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին).
3. Անձնագրի պատճեն
4. 2 տպագրված հոդված
5. 4 լուսանկար (3x4 չափի)
6. Ինքնակենսագրություն (CV)
7. Աշխատանքային գրքույկի պատճեն (եթե առկա է)
8. Քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմորդն աշխատում է):

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչև հոկտեմբերի 1-ը (ներառյալ):

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով՝ Երևան, Տիգրան Մեծի 17, 3-րդ հարկ, Գիտահետազոտական կենտրոն՝ 318 սենյակ, հեռ. 59-70-29:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 14.07. 2020 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ